ԱՐՎԵՍՏԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ

ՀԱՋԱՐԱԴԵՄ ՄԱՐԴԸ

Վասո Գոծիաշվիլին վրացական թատերաբեմի մեծ վարպետ էր: Նա աչքի էր ընկնում արտիստիզմով, իմպրովիզացիաների՝ հանպատրաստից ելույթների ունակությամբ, վառ անհատականությամբ եւ բացառիկ հմայքով: Նա լավագույնս համապատասխանում էր «Դերասանի արվեստը վերակերպավորման ունակությունն է» բնորոշմանը: Վասոն մեծ հաջողությամբ կատարում էր ինչպես դրամատիկական, այնպես էլ՝ կատակերգային եւ գրոտեսկային դերեր:

Վասո Գոծիաշվիլին մեծ ծառայություն ունի վրացական էստրադային արվեստի զարգացման գործում: Մոսկվայում նա էստրադային վարպետների առաջին համամիութենական մրցույթի դափնեկիր էր:

Նա անմոռանալի կերպարներ է ստեղծել նաեւ վրացական կինոյում:

Վասո Գոծիաշվիլին սերում է Կախեթիից: Նրա պապը՝ Քարամանը, չքավոր էր, բայց ուներ մեծ ընտանիք: Երբ նրա որդիներից մեկը՝ Դավիթը, դարձավ դեռահաս, հայրը նրան հարազատ Վաքիրի գյուղից ուղարկեց Թիֆլիս, ու նա դարձավ խոհարարի աշակերտ: Տարիներ անց, Դավիթը՝ մեր հերոսի հայրը, դարձավ փոքրիկ նկուղային գինետան տեր՝ Վինենի պողոտայում փողոցի վրա: Հայրը վաղ հասակում ամուսնացավ կախեթցի գեղջկուհի Եկատերինե Խատիաշվիլու հետ: Նրանք ունեին 13 երեխա, որոնցից յոթը մահացան վաղ տարիքում: Վասոն վերջնեկն էր, ուստի նրան ավելի շատ էին երես տալիս: Նա մոտ երկուսուկես տարեկան էր, երբ մահացավ հայրը՝ այրի կնոջ վրա թողնելով վեց երեխա, սակայն Եկատերինեն արտակարգ եռանդուն ու աշխատասեր կին էր եւ կարողացավ ոտքի կանգնեցնել բոլորին:

Վասոն երեք տարեկան էր, երբ ընտանիքը Անչիսխատի թաղամասից տեղափոխվեց Կուկիա: Այստեղ Վասոյի հարեւանները հայտնի հասարակական գործիչներ Զախարի Ճիճինաձեն եւ Իվանե Ռոստոմաշվիլին էին: Վերջիններս էլ Վասոյին հաղորդակից դարձրին ընթերցանությանը: Ճիճինաձեն Եկատերինեին խորհուրդ տվեց Վասոյին ուսման տալ հոգեւոր ճեմարանում: Սիոնի տաճարում նա ընդգրկվեց երգչախմբում, որը ղեկավարում էր Կոտե Չարկվիանին: Վերջինս էլ բացահայտեց Վասոյի հիանալի երաժշտական լսողությունն ու ձայնը: Սակայն Վասոն ճեմարան չընդունվեց, իսկ 1912-ին ավարտեց մեկամյա քաղաքացիական ուսումնարանը: Տղան դարձավ փականագործի աշակերտ. հույս ունեին, որ նա արհեստավոր կդառնա: Բայց Վասոն արհեստանոցում երկար չմնաց: Նա չդիմացավ պահանջկոտ ու մռայլ տիրոջ վերաբերմունքին: Վասոն հեռացավ: Այդպես ավարտվեց փականագործի նրա կարիերան, եւ սկսվեց կյանքի համալսարանը: Սկզբում քաղաքային գրասենյակում ցրիչ էր, որտեղ ստանում էր չնչին աշխատավարձ: Նրա պարտականությունների մեջ մտնում էին հարուստ հասցեատերերին անձնական նամակներ, ամփոփագրեր, հրահանգներ, գրություններ հասցնելը: Ահա այդ ժամանակ էլ նա ծանոթացավ միլիոնատերեր Մանթաշյանների, Թամամշյանների, Բոզարջյանցների, Միլովների նիստուկացին...

Վասո Գոծիաշվիլին կնոջ՝ Եվգենյա Աղաբեկովայի հետ:

Կանցնեն տարիներ, իսկ նա հիշողության մեջ կպահպանի նրանց ժեստերը, միմիկան եւ այդ ամենը կվերարտադրի բեմում:

Վասոն հիանալի պարում էր եւ շատ գեղեցկադեմ էր: Թատերաբեմը նրան ձգում էր մագնիսի նման: Ի վերջո դեռահասին, որ շարունակ պտտվում էր «Դեզերտիրկայում», «Բալագանի» շուրջ, նկատեց փորձառու, անտրեպրենյոր Տկաչովը եւ 14-ամյա տղային առաջարկեց հանդես գալ «Բալագանում»: Այստեղ, քաղաքում հայտնի հարմոնահար Բախչո (Բաղդասար) Դանիելյանի նվագակցությամբ, որը հայտնի օպերային երգչուհի Հայկանուշ Դանիելյանի հայրն էր, Վասոն երգում էր քառյակներ եւ պարում՝ նմանակելով «կինտոյի ժանրի» հիմնադիր Գիորգի Մեստիաշվիլուն:

Զարմանալի չէ, որ Վասոն անգիր գիտեր գլխավոր կինտոյի ողջ երգացանկը: Գիորգին Գոծիաշվիլի քույրերից մեկի ամուսինն էր: Վասոն վայելում էր մեծ հաջողություն. Տկաչովը նրան լավ էր վարձատրում եւ նույնիսկ օգնեց ընդունվել ծիծաղի արքա, ծաղրածու Դոնատոյի կրկեսային դպրոցը:

Սակայն, կրկեսում Վասոյի կարիերան անսպասելիորեն ընդհատվեց: «Երգիչ կինտոյի» համբավը հասավ Կուկիա: Եվ ավագ եղբայրը որոշեց այցելել «Բալագան»: Դժվար է պատմել, թե նա ինչքան զայրացավ, երբ տեսավ, որ Վասոն, փոխանակ աշխատելու փականագործի արհեստանոցում, զվարճացնում է հանդիսատեսին: Եղբայրը նետվեց կրկեսաբեմ, ապտակ ծեփեց Վասոյին եւ նրան դուրս բերեց այնտեղից: Ամբողջ կրկեսը ոտքի կանգնեց պաշտպանելու դերասանին: Դրությունը փրկեց փորձառու Տկաչովը՝ հանգստացնելով հանդիսատեսին: Եղբոր սպառնալիքներից եւ մոր թախանձանքներից հետո, Վասոն հարկադրված եղավ թողնել «Բալագանը»: Կրկեսում աշխատելիս՝ նա կուտակել էր 40 ռուբլի, դրան ավելացրին ընտանեկան խնայողությունները, եւ Վասոն ընդունվեց գիմնազիա: Նրան ընդունեցին երկրորդ դասարան. ահա այդպես նա հայտնվեց այլ աշխարհում՝ ինտելիգենտ դասատուների եւ բարեհաջող ընտանիքների երեխաների շրջանում: Տղան ձեռք բերեց գիտելիքներ ու կուլտուրա: Գիմնազիայում սովորելիս՝ նա առաջին անգամ բեմում տեսավ Օթելլոյին՝ հանրաճանաչ դերասան Ալեքսանդր Իմեդաշվիլու կատարմամբ: Վասոն դարձավ «Ժողովրդական տան» հաճախակի հյուր, որտեղ ելույթ էր ունենում վրացական թատերախումբը: Նա երազում էր թատրոնի մասին եւ, իհարկե, չէր կարող պատկերացնել, որ ինքը կդառնա այդ բեմի արքան՝ երբ «Ժողովրդական տունը» կվերանվանվի Մարջանիշվիլու անվան թատրոն:

1921 թվականի աշնանը Ակակի Փաղավայի ղեկավարած դրամատիկական ստուդիան կատարեց ունկնդիրների առաջին եւ հիրավի աստեղային ընդունելությունը, քանզի ստուդիա ընդունվեցին ապագա ԽՍՀՄ ժողովրդական արտիստներ Սերգո Զաքարիաձեն, Սեսիլիա Թաղաիշվիլին, Վասո Գոծիաշվիլին, Վրաստանի ժողովրդական եւ վաստակավոր արտիստներ Պյեռ Կոբախիձեն, Թամար Ճավճավաձեն, Թամար Ծուլուկիձեն: Քննական հանձնաժողովն էլ լիովին կազմված էր նշանավոր դեմքերից, ինչպիսիք են ակադեմիկոսներ Իվանե Զավախիշվիլին եւ Դմիտրի Ուզնաձեն, ռեժիսորներ Կոտե Մարջանիշվիլին ու Սանդրո Ախմետելին, դերասան Ալեքսանդր Իմեդաշվիլին, նկարիչներ Շարլամանն ու Սիդամոն Էրիսթավին, իրավաբան, պրոֆեսոր Անդրոնիկաշվիլին: Քննության ժամանակ, Վասոն մեծ պաթոսով արտասանեց Իոսեբ Գրիշաշվիլու «Նոր Աստվածը»: Հանձնաժողովի անդամները սաստիկ զարմացան եւ նրան խնդրեցին երկրորդ անգամ արտասանել բանաստեղծությունը: Առանց երկմտանքի ընդունեցին ստուդիա, իսկ հետո, ջանասիրության եւ լավ ուսման համար, նշանակեցին Սումբաթաշվիլի-Յուժինի դրամապարգեւ: Վասո Գոծիաշվիլու անդրանիկ բեմելը կայացավ 1925 թվականի դեկտեմբերին: Քսանամյա դերասանը փայլուն կատարեց երկու միանգամայն տարբեր դերեր՝ Նատալյա Ազիանու «Դեզերտիրկա» պիեսում: Մի տեսարանում նա անձնավորում էր 90-ամյա ծերունուն, իսկ մյուսում՝ երիտասարդ, հարբեցողությամբ տարված, շրջմոլիկ Գրիշկային...

1926 թվականին Ռուսթավելու թատրոնը գլխավորեց Սանդրո Ախմետելին, ում շնորհիվ Վասոն նշանավոր դարձավ թատրոնում եւ մասնակցում էր բոլոր բեմադրություններին: Նա առավել մեծ հաջողություն վայելեց Շանշիաշվիլու «Անզոր» պիեսում, որը բեմադրել էր Ախմետելին:

Դասական թատրոնի հոյակապ նմուշ դարձավ Վասո Գոծիաշվիլու կատարմամբ Լուարսաբ Թաքթարիձեի դերը: Թախտին պառկած Լուարսաբ-Գոծիաշվիլու յուրաքանչյուր ժեստ յուրովի արվեստ էր, ինչը մատչելի է միայն բարձրագույն վարպետությամբ եւ հարուստ արտիստական տաղանդով օժտված արվեստագետին:

Թատերական բեմում Վասո Գոծիաշվիլին ստեղծեց մեծ թվով կերպարներ, որոնք կրում էին նրա տաղանդի կնիքը՝ Ռիչարդ III, Հուլիոս Կեսար, Ֆիգարո, Խլեստակով, Իրակլի թագավոր եւ այլն: Ավագ եւ միջին սերնդի թբիլիսցիները լավ են հիշում «Հին վոդեւիլներ» ներկայացումը, ուր նա խաղում էր երեք՝ ներկայացումը վարողի, Տիգրան Հոպոպյանցի եւ Արշակի դերերը: Բեմադրությունն ավարտվում էր հուզառատ երգով՝ ներկայացումը վարող Գոծիաշվիլու կատարմամբ:

Բազմաթիվ հանդիսականներ մինչեւ այժմ հիշում են նաեւ էստրադայում դիմակներով նրա ելույթները, դիմակներ, որ ստեղծում էր մեծանուն նկարիչ Լադո Գուդիաշվիլին: Էստրադայում Գոծիաշվիլու ելույթներն ընթանում էին կնոջ՝ Եվգենյա Աղաբեկովայի երաժշտական ուղեկցությամբ:

Հավանաբար բոլորն են տեսել «Քեթո եւ Կոտե», «Այլ են այժմ ժամանակները» դասական կինոնկարները, որոնցում Վասոյի հերոսները՝ Սիկոն եւ Ավետիքը, ստիպում էին ծիծաղել նույնիսկ ամենամռայլ հանդիսականին:

Վասո Գոծիաշվիլու առաջին կինը Սեսիլիա Թաղաիշվիլին էր: Նրանք ունեցան մեկ որդի՝ Դաթոյին: Վեց տարվա համատեղ կյանքից հետո բաժանվեցին, իսկ Դաթոյին մեծացրեց Սեսիլիան, ով այդպես էլ չամուսնացավ. մեծ դերասանուհին մինչեւ վերջ հավանաբար պահպանում էր սերը Վասոյի հանդեպ:

ՄԱԼԽԱԶ ԷԲՐԱԼԻՋԵ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ «ՎԵՐՆԱՏՈՒՆ-9» ՏԱՐԵԳԻՐՔԸ

Վիրահայոց թեմի «Հայարտուն» մշակույթի կենտրոնում՝ հայ գրչության 500-ամյակին նվիրված «Վերնատուն»-9 տարեգրքի շնորհանդեսն առանձնացավ նախորդներից իր բազմամարդ մթնոլորտով:

Ողջունելով մայրաքաղաքի, նաեւ Վրաստանի Ջավախեթիի տարածաշրջանից հյուրընկալած «Վերնատուն» միության անդամներին եւ շնորհանդեսին ներկա մյուս հյուրերին՝ Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Գ.Սնխչյանը ներկաներին հիշեցրեց 1997 թվականին ստեղծված մշակութային օջախի թե' լավ, թե' վատ օրերը, գոյության 16 տարիների ընթացքում ձեռքբերումները: Գրքի 37 հեղինակների շարքում Գ.Սնխչյանն առանձնակի ողջունեց նոր, երիտասարդ հեղինակներին:

«Վերնատուն»-9-ի լույս ընծայումը շնորհավորեցին Վրաստանի նախագահի խորհրդական, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրյանը, բանաստեղծ, թարգմանիչ Անահիտ Բոստանջյանը, գիտությունների թեկնածու Էմմա Ախտյանը, բանաստեղծ, թարգմանիչ Գիվի Շահնազարը, երեւանաբնակ, վիրահայ բանաստեղծ Միքայել Ախտյանը, բանաստեղծուհի Մարինա Մոսեսովա-Կիրակոսյանը, բանաստեղծ, նկարիչ Գեւորգ Հայասան: Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը եւս շնորհավորեց ներկաներին՝ գրքի շնորհանդեսի ու այդ օրը նշվող եկեղեցական «Վարդավառ» տոնի առիթներով, արժեւորելով տարեգրքի դերակատարումը իբրեւ սերունդների հոգեւոր զարգացման ազդակ:

Տարեգիրքը տպագրվում է ՀՀ Սփյուռքի նախարարության աջակցությամբ:

«Վերնատուն»-9-ում զետեղված ստեղծագործությունների հեղինակներն են. Խաժակ Եփրիկյան (Թբիլիսի), Սերգեյ Առաքելյան (Թբիլիսի), Ազատ Մանուկյան (Թբիլիսի, 1937-1912), Անրի Գրիգորյան (Թբիլիսի), Գիվի Շահնազար (Թբիլիսի), Անահիտ Բոստանջյան (Թբիլիսի), Լեւոն Պողոսյան (Թբիլիսի, 1929-2011), Լուսինե Վանոյան (Թբիլիսի), Ստանիսլավ Մելքոնյան (Թբիլիսի),Հովհաննես Սարգսյան (Թբիլիսի), Մոնիկա Քուրքչյան (Թբիլիսի), Վիկտոր Հովսեփյան (Նինոծմինդայի շրջան, գյուղ Հեշտիա, 1947-1996), Նազարեթ Կիրակոսյան (Ախալքալաքիի շրջ., գ. Տուրցխ), Միքայել Եսոյան (Նինոծմինդայի շրջ., գ.Փոքր Խանչալի), Գուրի Եթեր (Ախալքալաքիի շրջ., գ.Տուրցխ), Արաքսյա Սնխչյան (Նինոծմինդա), Գեւորգ Հայասա (Ախալքալաքիի շրջ., գ.Մերենիա), Ալբերտ Իսոյան (Նինոծմինդայի շրջ., գ.Սաթխա), Հովհաննես Մարիկյան (Նինոծմինդայի շրջ., գ.Հեշտիա), Հմայակ Գրիգորյան (Նինոծմինդայի շրջ., գ.Գանձա), Գեւորգ Այվազյան (Նինոծմինդայի շրջ., գ.Փոքր Խանչալի), Դիվին Քաշանյան (Նինոծմինդայի շրջ., գ.Հեշտիա), Նարինե Սիրականյան (Նինոծմինդայի շրջ., գ.Գանձա), Բարդուղիմեոս Շաշիկյան (Ախալքալաքիի շրջ., գ.Աբուլ), «Նոր վերնականներ» շարքում՝ Վլադիմիր Զատիկյան (Նինոծմինդայի շրջ., գ.Ձիգրաշեն), Սիմոն Պապիկյան (Ախալքալաքիի շրջ., գ.Ջուլղա), Արմեն Հովհաննիսյան (Մառնեուլիի շրջ., Շահումյան ավան), Զարմիկ Սարգսյան (Նինոծմինդա), «Այլալեզու հայ գրողներ» շարքում՝ թբիլիսաբնակներ՝ Արտեմ Գրիգորենց, Մարինա Մոսեսովա-Կիրակոսյան, Միխայիլ Անանով, Գարրի Ղալամքարով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ԱՐԴՅՈ՞Ք ԴԵՂՈՐԱՅՔԻ ԹԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻՑ ՄԵԿՆ Է

Ինչպես հայտնի է, Արժույթի միջազգային հիմնադրամը հայտարարել է, որ Վրաստանում դեղորայքը չափազանց թանկ է եւ պետական ապահովագրման պետական ծրագիրը չի կարողանում լուծել այդ հիմնախնդիրը:

Երիտասարդ ֆինանսիստների եւ գործարարների ասոցիացիայի նախագահ Նոդար Ճիճինաձեի խոսքերով՝ երկրի ապահովագրային եւ դեղագործական շուկաները չի կարելի քննարկել համատեղ եւ միակ բանը, որ կարող է նվազեցնել դեղորայքի գները, մրցակցային միջավայրի ստեղծումն է: Սակայն, նրա կարծիքով, այդ ուղղությամբ երկրում դեռեւս ոչինչ չի փոխվել եւ մինչեւ այժմ դեղագործական շուկայում աշխատում են այն ընկերությունները, որ աշխատել են նախկինում:

«Եթե վերջին ժամանակներս դեղորայքի գները չնչին չափով նվազել են, ապա դա ավելի շուտ բիզնեսի բարի կամքի դրսեւորում է, ուրիշ ոչինչ»,- հայտարարել է Ճիճինաձեն: Նրա խոսքերով՝ երկու տարի առաջ Ասոցիացիան իրականացրել է ուսումնասիրություն, եւ այն ցույց տվեց, որ դեղագործական ընկերությունները դեղամիջոցները վաճառում են 100 տոկոս շահով:

Վերջին ուսումնասիրությունը տվյալ շուկայում անցկացվեց 2012 թվականի հունիսին, «Միջազգային թափանցիկություն-Վրաստան» ոչ կառավարական կազմակերպության կողմից: Պարզվեց, որ գների նվազեցումը վերաբերել է առավել կարեւոր դեղորայքի 27 տոկոսին եւ էժան «գեներիկ» դեղամիջոցների 21 տոկոսին: Նույն ուսումնասիրությունը ցույց տվեց, որ վրացական դեղագործական ընկերություններում հավելարժեքը կազմում է 102 տոկոս, այն ժամանակ, երբ, օրինակ, Իտալիայում դա 49 տոկոս է, Հունգարիայում՝ 27: Դա վկայում է, որ վրացական ընկերություններն աշխատում են շատ բարձր շահույթի ուղղությամբ: Դեղամիջոցների գների նվազերման մասին խոսում են նաեւ իշխանության ներկայացուցիչները, այդ թվում՝ առողջապահության եւ էկոնոմիկայի նախարարները: Դեղագործական ճյուղի փորձագետ Թինա Թուրձելաձեի կարծիքով, վերջին ժամանակներս դեղորայքի գների կապակցությամբ զգալի փոփոխություններ չեն կատարվել եւ ընկերությունների շահույթի նորման նույնպես մնացել է անփոփոխ:

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ð²ðò – ä²Î²êÊ²Ü ❋ ²ÚÈ²¼²Ü ❋ ÊàðÐàôð¸Ü°ð

ÐÆØÜ²ÊÜ¸Æð

ՋՂԱՁԳՈՒԹՅՈՒՆ

Դպրոցում սպորտի դասերի ժամանակ, որդուս մոտ հաճախ տեղի է ունենում սրնքամասի ջղերի կծկում: Ի՞նչն է պատճառը:

ԱՐԱՅԻԿ ՂԱՋԱՐՅԱՆ

Թբիլիսի

Հնարավոր են մի քանի պատճառներ: Առաջին. երկարատեւ վազքի ժամանակ տեղի է ունենում կաթնաթթվուտների արտանետում, եւ արդյունքում ջղաձգությունից ոտքը կծկվում է: Երկրորդ. ջղերը կարող են կծկվել նաեւ, եթե երեխաները զբաղվում են ցուրտ պայմաններում: Վերջապես երրորդ եւ առավել հավանական պատճառը. վազքի ժամանակ երեխան ճիշտ չի դնում ոտքը: Սովորաբար վազողը ամբողջ թաթն է դնում գետնին: Իսկ եթե հենվում է միայն ոտնաթաթի ծայրին (ոտնամատներին), ապա խախտվում է ոտքի նորմալ արյունաշրջանառությունը, եւ երեխան անսասելիորեն զգում է սուր ցավ: Ի՞նչ պետք է անել այդպիսի իրավիճակում: Դադարեցնել վազքը, հարմար կանգնել կամ նստել եւ ուժեղ, բայց ոչ կտրուկ կերպով, իրեն ձգել հիվանդ ոտքի մատները, եւ մերսել սրնքամասի ջղերը: Սպորտի ուսուցչին խնդրեք, որ նա երեխաներին ցույց տա վազքի ճիշտ տեխնիկան եւ որոշ ժամանակ վերահսկի, թե երեխաներն ինչպես են կատարում խորհուրդը:

Î°Üò²Ô²ÚÆÜ

ՎԱՐՍԱՀԱՐԴԱՐԻՉ ԳՆԵԼԻՍ

Յանկանում եմ վարսահարդարիչ գնել: Ծանոթներիցս յուրաքանչյուրն իր տարբերակն է առաջարկում, նրանց խորհուրդները, հաճախ հակասում են միմյանց: Ի՞նչ պետք է իմանալ մինչեւ խանութ գնալը:

ԳԱՐԵԳԻՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Բաթումի

Առաջին. ինչի՞ համար է այն ձեզ պետք: Պարզապես մազերը չորացնելո՞ւ, մազերը չորացնելու եւ դրանց ծավալ հաղորդելո՞ւ, թե՞ հատուկ սանրվածք ունենալու համար: Նշվածից ելնելով՝ վարսահարդարիչները լինում են 3 տեսակի: Առաջինը ամենահասարակներն են՝ մեկ գլխիկով, որը կարելի է անվանել կոնցենտրատոր: Երկրորդը՝ դիֆուզոր գլխիկով, իսկ երրորդը խոզանակով վարսահարդարիչներն են:

Երկրորդ. պետք է իմանալ վարսահարդարիչի արագությունն ու աշխատանքի որակը, որը կապված է այնպիսի բնութագրիչներից, ինչպիսիք են օդի հոսքի հզորությունը, արագությունը եւ ջերմությունը: Հզորությունները շատ տարբեր կարող են լինել, սկսած՝ 200 վատտից, վերջացրած՝ 1800 վատտով: Որքան մեծ է հզորությունը, այնքան վարսահարդարիչն արագ է չորացնում մազերը:

Կարճ մազերը չորացնելու համար 400-800 վատտ հզորությունը բավարար է, երկար ու խիտ մազերի համար ցանկալի է ընտրել 1600-1800 վատտ հզորությամբ վարսահարդարիչ: Խոզանակով վարսահարդարիչները, որոնք ավելի հաճախ օգտագործվում են ոչ թե չորացնելու, այլ սանրվածքների համար, սովորաբար ցածր հզորություն են ունենում: Արագությունների եւ ջերմային մակարդակների թիվը տարբեր մոդելների դեպքում տարբեր են: Սակայն, որքան դրանք շատ են, այնքան չորացման եղանակներն էլ են ավելանում, որոնցից կարող եք ընտրել հատկապես այն, որը կհամապատասխանի ձեր մազերի տեսակին: Նշենք եւս մի հատկություն, որով օժտված են վարսահարդարիչների գործնականում գրեթե բոլոր վերջին մոդելները: Խոսքը սառը օդի մասին է: Մազերի հարդարման լավագույն ձեւը բարձր ջերմաստիճանը մերթընդմերթ ցածրով փոխարինելն է, որը մազերին առաձգականություն է հաղորդում: Սառը օդի հոսքը, մազերը սառեցնելով նպաստում է, որ սանրվածքի ձեւը տեւական ժամանակով պահպանվի:

ԳԻՏԵ՞Ք, ՈՐ...

ԵՐԵԽԱՅԻ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿՅԱՆՔՈՒՄ ԿԱԽՎԱԾ Է ՆԱԵՎ ԱՆՈՒՆԻՑ

Ծնողները սովորաբար երեխաների համար այնպիսի անուններ են ընտրում, որոնք սովորաբար գեղեցիկ հնչեղություն են ունենում ազգանունների եւ հայրանունների հետ: Լինում են նաեւ դեպքեր, երբ երեխաներին անվանակոչում են հարազատների, մոտ ազգականների անուններով: Բրիտանացի մասնագետները պնդում են, որ պետք չէ երեխաներին այն մարդկանց անուններ տալ, ովքեր դժբախտ ճակատագիր են ունեցել:

Յուրաքանչյուր ծնող ցանկանում է, որպեսզի իր երեխան կյանքում մեծ հաջողությունների հասնի, լինի երջանիկ, սակայն ամեն ինչ չէ, որ ծնողների ցանկությամբ է լինում: Երեխաներին անուն տալուց առաջ անհրաժեշտ է իմանալ անվան նշանակությունը, տալ այնպիսի մարդու անուն, ով իր կյանքում մեծ հաջողությունների է հասել, եւ իր մահից հետո բարի համբավ է թողել:

Երջանիկ են համարվում նաեւ այն երեխաները, ովքեր սրբերի անուններ ունեն, ինչպես նաեւ նրանք, ում անունները եզակի են եւ քիչ են հանդիպում:

ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐԻ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ԱՎԱՐՏԻՆ

Բժիշկները զգուշացնում են, որ նոր հակաբիոտիկներ գտնելն ավելի ու ավելի բարդ է դառնալու:

Փորձագետները մտավախություն ունեն, որ հայտնի շատ հակաբիոտիկների դեմ դիմացկուն մանրէների տարածումը մարդկության համար ոչ պակաս վտանգավոր է, քան գլոբալ տաքացումն ու հնարավոր այլ աղետները:

Անգլիայի գլխավոր բժիշկ Սալլի Դեւիսի պնդմամբ, մանրէներն իմունիտետ են ձեռք բերում ժամանակակից դեղամիջոցների մեծամասնության դեմ, իսկ նոր հակաբիոտիկներ պարզապես չկան:

Ելույթ ունենալով պառլամենտական հանձնաժողովի առջեւ՝ Դեւիսը հայտնեց իր մտավախությունը խնդրի լրջության վերաբերյալ: Նրա խոսքերով, մոտ ապագայում, անգամ ամենասովորական վիրահատությունները կարող են վտանգել հիվանդների կյանքը:

«Ակնհայտ է, որ գլոբալ տաքացումը գլխավոր սպառնալիքը չէ մարդկության համար»,- հայտարարեց Դեւիսը. «Ապոկալիպսիսը կարող է լինել 20 տարի անց, իսկ, օրինակ, ազդրի մկանի վիրահատությունը կարող է հանգեցնել մահվան, քանի որ հակաբիոտիկներ այլեւս չեն լինի»:

Հակաբիոտիկները վերջացել են

Հակաբիոտիկների հայտնաբերումը համարվում է ժամանակակից բժշկության ամենախոշոր նվաճումներից մեկը: Սակայն մանրէներն արագ են զարգանում եւ հարմարվում են դրանց:

Արդեն հայտնի են դեպքեր, երբ մի շարք հիվանդությունների բուժման համար օգտագործվող հակաբիոտիկներն արդյունք չեն տվել: «Մետիցիլին-կայուն ոսկեգույն ստաֆիլոկոկ» բառակապակցությունը շատ բժիշկների

դամիջոցներին դիմադրելը «շատ, շատ լուրջ խնդիր է դարձել»:

«Շատերը բուժման համար են արտերկիր մեկնում, իսկ ոմանք մեկնում են որպես զբոսաշրջիկներ եւ վերադառնում են հոնորեա հիվանդությամբ, ինչը, հակաբիոտիկներին դիմադրություն ցույց տալու տեսանկյունից, մեծ խնդիր է: Բացի այդ, շատ երկրներում դեռեւս կա տուբերկուլյոզ հիվանդությունը»,- զգուշացնում է փորձագետը. «Անիմաստ է սպասել ինչ-որ միջոցի հայտնաբերմանը՝ նոր հակաբիոտիկներ պարզապես չեն մնացել»:

ԱՌԻԹՄԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԻՋՈՑ

Իսրայելցի սրտաբանները սկսել են օգտագործել սրտի առիթմիայի դեմ կիրառվող նոր մեթոդ: Այն առիթմիայի դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցն է: Պայքարն իրականացնելու համար սրտաբանները այսուհետ կօգտագործեն հատուկ հեղուկով լիցքավորված փուչիկ:

Մինչ այժմ իսրայելցի մասնագետներն աշխարհի շուրջ 200 բուժհաստատություններում իրականացրել են 20 նման գործողություն:

Գելով լիցքավորված փուչիկը ներդրվում է մարդու սիրտ՝ հատուկ կատետորի միջոցով: Առաջին նման «վիրահատության» միջոցով փրկվել է արդեն երեք հիվանդի կյանք: Սարքավորումները գնվել են «Medtronic» ամերիկյան ընկերությունից: Փուչիկի արժեքը 5000 դոլար է:

Մասնագետներն այս գործընթացը ավելի նպատակահարմար են համարում: Պաշտոնական վիճակագրության համաձայն՝ աշխարհի բնակչության ութ տոկոսը տառապում է սրտի առիթմիայից. միայն Իսրայելում նման մարդկանց թիվը 70 հազար է: Բուժման այս արդյունավետ կուրսից հետո հիվանդությամբ տառապողներն անմիջապես դուրս են գրվել հիվանդանոցից:

ԹԵՎԱՎՈՐ ՍՏՔԵՐ

* Երբեք մի՛ զայրացեք, եթե Ձեզ որեւէ մեկը վիրավորել է: Նման վիճակում Դուք լավ վրեժ չեք մտածի:

* Երբեք մի՛ պատմեք Ձեր նոր ընկերուհուն այն սրիկայությունների մասին, ինչ Ձեր հանդեպ արել են նախկինները: Չարժե նրանց գաղափար հուշել:

* Եթե կինն իսկապես ինչ-որ բանում համոզված է, կա նրան տարհամոզելու մեկ եղանակ՝ անմիջապես համաձայնվել...

* Աղջկա հետ պետք է վարվել այնպես, ինչպես վարվում ես տոնածառի հետ՝ կտրես եւ բերես տուն:

* Երբեք նվերը միանգամից մի՛ բացեք, այլ սպասեք հյուրերի հեռանալուն: Հակառակ դեպքում՝ ներկաներից ոչ մեկին այն հետո չես նվիրի:

* Ես չեմ խղճում մեր երիտասարդներին: Ես խղճում եմ նրանց երեխաներին:

* Անշնորհակալ երեխաներ չեն լինում: Լինում են հիմար ծնողներ, ովքեր երեխաներից շնորհակալություն են սպասում:

* Ասել այն, ինչ մտածում ես, դժվար չէ, բայց ցավոտ է:

²ÜºÎ¸àÎÜºð

** Կինս երեկ ասաց.*

- Հա, ի՞նչ ես ասում, ես հիշում եմ, հիշում եմ... Ես պարզապես մոռացել եմ...

** Նորապսակ կինը զանգում է մորը.*

- Մայրիկ, ամուսնուս դուր չեկավ քո ֆիրմային շիլան, նորից ասա պատրաստման ձեւը:

- Վերցնում ես ծավարը, եփում...

- Հա... Եփո՞ւմ ես...

** - Ես բոլորովին էլ վերջին սրիկան չեմ. ինձնից հետո երկու հոգի հերթ են պահել:*

** - Ինչո՞ւ ես այդքան տխուր:*

- Երեկ մտա մետրո, իսկ այնտեղ մի հրաշք աղջիկ էր նստած:

Երիտասարդ, ոտքերը մինչեւ ականջները, գեղեցկուհի... Ես չդիմացա եւ նրան աչքով արեցի...

- Իսկ նա՞:

- Կանգնեց եւ տեղն ինձ զիջեց:

** Հանդիպում են երկու ընկեր:*

- Դե, ինչպիսի՞ ազդեցություն թողեց քեզ վրա կնոջիցդ բաժանվելը: Շա՞տ ծանր տարար:

- Հիմա արդեն սարսափելի չէ: Իսկ առաջին շաբաթներին քիչ էր մնում խելագարվեի ուրախությունից:

** Ձայն՝ վիրահատարանում.*

- Մենք նրան կորցնում ենք... Մենք նրան կորցնում ենք... Մենք նրան կորցրեցինք:

Ձայն վերեւից.

- Ամեն ինչ կարգին է. մենք նրան ընդունեցինք:

** - Դու հիմար ես:*

- Բայց հո գեղեցիկ եմ:

- Ո՞վ է քեզ ասել:

- Դո՛ւ:

- Եվ դու հավատացե՞լ ես:

- Իհարկե՛:

- Ուրեմն հիմար ես:

- Բայց հո գեղեցիկ եմ:

ՀԱՅԱՍՏԱՆ - ԱՐՑԱԽ. Փաստեր, իրադարձություններ

«ՎՐԱՍՏԱՆԻ», ԱՐՄԵՆՊՐԵՍԻ, ՊԱՆԱՐՄԵՆԻԱՆԻ ԵՎ ԿԱՎԿԱԶՊՐԵՍԻ ՆՅՈՒԹԵՐՈՎ

ԲԱՐՁՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆ՝ ԲԱՆԿԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 9-ին ընդունել է Ասիական զարգացման բանկի (ԱԶԲ) նախագահի տեղակալ Սյաոյու Ժաոյին:

Հանդիպմանը Հայաստանի նախագահը կարեւորել եւ բարձր է գնահատել ԱԶԲ-ի առաքելությունը ինչպես Հայաստանում, այնպես էլ ասիական տարածաշրջանում: Հանդիպմանը երկուստեք ընդգծել են բանկի օժանդակությամբ Հայաստանում իրականացվող ներդրումային ծրագրերի կարեւորությունը հեռանկարային մի շարք ոլորտներում, այդ թվում՝ ճանապարհաշինության եւ հատկապես Հայաստանի զարգացման համար առանցքային նշանակություն ունեցող «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի ծրագիրը:

Սյաոյու Ժաոն նշել է, որ ԱԶԲ-ն շահագրգռված է խորացնելու հարաբերությունները Հայաստանի հետ եւ շարունակելու ջանքերը ներդրումների ներգրավման եւ Հայաստանի տնտեսական կայուն աճին նպաստելու ուղղությամբ:

ԸՆԴԳԾՎԵԾ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Կողմերը գոհունակությամբ են նշել շարժունակության ոլորտում համագործակցության առաջընթացը՝ ընդգծելով, որ ստորագրվել եւ այժմ վավերացման փուլում են գտնվում Վիզաների դյուրացման եւ Հետընդունման վերաբերյալ համաձայնագրերը:

Եվրոպական Միության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեն խոսել է նաեւ Վիլնյուսի Արեւելյան գործընկերության գագաթաժողովի նախապատրաստական աշխատանքների մասին:

Նույն օրը կայացավ Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի հանդիպումը Եվրոպական Միության ընդլայնման եւ հարեւանության քաղաքականության հարցերով հանձնակատար Շտեֆան Ֆյուլեի գլխավորած պատվիրակության հետ: Երկուստեք ընդգծվել է Ասոցացման համաձայնագրի եւ, մասնավորապես, ԵՄ-ՀՀ միջեւ համապարփակ ազատ առեւտրի գոտու ստեղծման ուղղությամբ տարվող բանակցությունների արձանագրված շոշափելի առաջընթացը:

ԱՎԱՆԴՆԵՐԻ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎՈՒՄ Է ՄԵԿՈՒԿԵՍ ՄԻԼԻԱՐԴ ԴՐԱՄ

Սոցիալական քաղաքականության ոլորտում Հայաստանի կառավարությունը ծրագրում է իրականացնել ԽՍՀՄ խնայբանկում մինչեւ 1993թ. ներդրված ավանդների դիմաց փոխհատուցման տրամադրման շարունակական ծրագրեր:

Հայաստանի պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի մշակման մշտապես գործող բարձրագույն խորհրդի որոշմամբ հաստատված Հայաստանի 2014-2016 թվականների պետական բյուջեներից իրականացվելիք բյուջետային ծախսերի ֆինանսավորման կողմնորոշիչ չափաքանակներով այդ նպատակով նախատեսված հատկացումներն ըստ տարիների կազմելու են 1.5-ական մլրդ դրամ:

Միաժամանակ, «Հայխնայբանկում ավանդատու հանդիսացող Արցախյան պատերազմի մասնակիցներին՝ ազատամարտիկներին, որպես նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում մինչեւ 1993 թվականի հունիսի 10-ը ներդրված դրամական ավանդների դիմաց փոխհատուցում տրամադրելու մասին» օրինագծով պատգամավորներն առաջարկում են հնարավորություն տալ ավանդատու հանդիսացող արցախյան պատերազմի մասնակիցներին՝ ազատամարտիկներին առաջնահերթության կարգով ստանալու ավանդների փոխհատուցումը:

ՈՒԺԻ ՄԵՋ Է ՄՏԵԼ ԳԱԶԻ ԵՎ ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԻԱՅԻ ՆՈՐ ՍԱԿԱԳԻՆԸ



Հուլիսի 7-ին ուժի մեջ են մտել բնական գազի եւ էլեկտրաէներգիայի համար սահմանված նոր սակագները:

«ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող բնական գազի համար ամսական մինչեւ 10 հազար խորանարդ մետր սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը սահմանվել է 156 դրամ՝ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար, իսկ ամսական 10 հազար խորանարդ մետր եւ ավելի սպառում ունեցող սպառողներին վաճառվող բնական գազի սակագինը սահմանվել է 276.98 ԱՄՆ դոլարին համարժեք դրամ՝ սպառված յուրաքանչյուր հազար խորանարդ մետր բնական գազի համար:

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի համար 1. 0,38 կվ լարմամբ սնվող սպառողներին (այդ թվում՝ բնակիչ-բաժանորդներին) վաճառվող էլեկտրական էներգիայի ցերեկային սակագինը սահմանվել է 38 դրամ/կվտժ, իսկ գիշերային սակագինը՝ 28 դրամ/կվտժ: 6(10) կվ լարմամբ սնվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի ցերեկային սակագինը սահմանվել է 35 դրամ/կվտժ, իսկ գիշերային սակագինը՝ 25 դրամ/կվտժ, 3. 35 կվ եւ բարձր լարմամբ սնվող սպառողներին վաճառվող էլեկտրական էներգիայի ցերեկային սակագինը սահմանվել է 29 դրամ/կվտժ, իսկ գիշերային սակագինը՝ 25 դրամ/կվտժ:

ՎԱՐԵԼԱՀՈՂԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է

Վերջին տարիներին գյուղատնտեսությունում ներդրված ռազմավարական ծրագրերը հիմնովին փոխել են գյուղատնտեսական հողային ռեսուրսների նպատակային օգտագործման ցուցանիշները:

2013 թվականի տվյալներով ցանքատարածություններն ընդլայնվել են՝ հասնելով 321-322 հազար հեկտարի: Այս տարի՝ Հայաստանի պատմության մեջ առաջին անգամ, վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը կհասնի 72%-ի, իսկ ցանքատարածությունների աճը հիմնովին կփոխի Հայաստանի գյուղատնտեսական նշանակության հողային քարտեզը: 2011-2012թթ. գյուղատնտեսական մշակաբույսերի ցանքատարածությունները երկրում կազմել են, համապատասխանաբա, 286.7 եւ 304.2 հազար հա, այսինքն՝ վարելահողերի նպատակային օգտագործման մակարդակը բարձրացել է՝ 2011թ.-ին կազմելով 63.8%, իսկ 2012թ.-ին՝ 67.9%: 2012 թ-ին նախորդ տարվա նկատմամբ ցանքատարածություններն ավելացել են շուրջ 17.5 հազար հա-ով:

Հայաստանը դասվում է սակավահող երկրների շարքին, սակայն 2010թ. տվյալներով նպատակային չէր օգտագործվում շուրջ 165 հազար հա վարելահող, եւ այդ արժեքավոր ռեսուրսի նպատակային օգտագործման մակարդակը 63.2 % էր:

ՀԱՏԻԿԱՅԻՆՆԵՐԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՆՑՅԱԼ ՏԱՐՎԱ ՑՈՒՑԱՆԻՇԸ ԲԱՐԵԼԱՎՎԵԼ Է

Հայաստանում ցորենի եւ հացահատիկային այլ մշակաբույսերի արտադրության ծավալն այս տարի 45-46 հազար տոննայով կգերազանցի անցյալ տարվա մակարդակը:

Այս տարի հացահատիկային մշակաբույսերի գծով ցանքատարածությունները նախորդ տարվա համեմատ ավելի են 9-10 հազար հեկտարով՝ 172 հազար հեկտարի փոխարեն ունենք 181-182 հազար հա ցանքատարածություն: Անցյալ տարվա 456,1 հազար տոննա հացահատիկի եւ հատիկաընդեղենի փոխարեն այս տարի նախատեսվում է 500 հազար տոննայի սահմաններում համախառն բերք: Անցյալ տարվա համեմատությանբ մեկ միավոր հեկտարի հաշվով այս տարի ակնկալվում է 2-3 ցենտներից ավելի հացահատիկ:

Նշենք, որ Հայաստանի ցածրադիր գոտիներում արդեն մեկնարկել է ցորենի բերքահավաքը: 2011 թվականին Հայաստանում արտադրվել է 168 հազար տոննա ցորեն, 2012 թվականին՝ 243 հազար տոննա:

ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅԱԶԳԻ ՆԱԽԱՐԱՐԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 9-ին ընդունել է Ռումինիայի էկոնոմիկայի նախարար, հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի ռումինական կողմի նախագահ Վարուժան Ոսկանյանին: Պատվիրակությունը Երեւանում մասնակցել է հայ-ռումինական միջկառավարական հանձնաժողովի 4-րդ նիստին: Սերժ Սարգսյանը հույս է հայտնել, որ նախարար Վարուժան Ոսկանյանի այցը, հանձնաժողովի նիստի եւ հայ-ռումինական գործարար համաժողովի անցկացումը նոր խթան կհանդիսանան երկկողմ տնտեսական հարաբերությունների զարգացման համար:

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանի եւ Ռումինիայի էկոնոմիկայի հայազգի նախարար Վարուժան Ոսկանյանի գլխավորած պատվիրակության հանդիպմանը զրուցակիցները մտքեր են փոխանակել նաեւ օդային ուղիղ չվերթերի կազմակերպման, զբոսաշրջության զարգացման եւ տնտեսական կապերի աշխուժացման նոր ուղղությունների վերաբերյալ:

Հայաստանի վարչապետ Տիգրան Սարգսյանը վերահաստատել է Ռումինիայի վարչապետ Վիկտոր Պոնտայի՝ Հայաստան այցելելու հրավերը:

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 6-ին հանդիպել է Հանրային խորհրդի անդամների հետ:

Քննարկման է ներկայացվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերի լայն շրջանակ:

Մինչ օրակարգի հարցերին անցնելը, Հանրային խորհրդի նախագահ Վազգեն Մանուկյանն անդրադարձել է արդեն չորս տարի գործունեություն ծավալող խորհրդի անցած ճանապարհին, ստեղծումից անմիջապես հետո այդ կառույցի նկատմամբ թերահավատ մոտեցումներին, չեռքբերումներին, ընթացիկ խնդիրներին, ինչպես նաեւ ապագայի վերաբերյալ պատկերացումներին:

«ՈՍԿԵ ԾԻՐԱՆ» ԿԻՆՈՓԱՌԱՏՈՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը հուլիսի 9-ի երեկոյան հանդիպում է ունեցել «Ոսկե ծիրան» երեւանյան միջազգային հոբելյանական 10-րդ կինոփառատոնի պատվավոր հյուրերի եւ Հայաստանից ու աշխարհի տարբեր երկրներից փառատոնին մասնակցող կինոգործիչների հետ:

Փառատոնի մասնակիցները Սերժ Սարգսյանի հետ զրուցել են «Ոսկե ծիրան»-ի 10-ամյա ուղու, հաջողությունների, ինչպես նաեւ այս տարվա փառատոնի մրցութային ծրագրերի մասին: Նրանք գոհունակությամբ են արձանագրել, որ կինոփառատոնի հեղինակությունը տարեցտարի աճում է, ընդլայնվում է մասնակիցների աշխարհագրությունը, ավելանում են ցուցադրվող ֆիլմերը:

ԱՆՑԿԱՑՎԵԾ ՏՈԼՄԱՅԻ ԱՎԱՆԴԱԿԱՆ ՕՐ

Տոլմայի արդեն ավանդական դարձած երրորդ փառատոնը, որն անցկացվեց հուլիսի 10-ին Արմավիրի մարզի «Սարդարապատ» հուշարձանային համալիրի հարեւանությամբ, ներկայացավ իր այցելուներին 24 տաղավարներով: Այս տարի փառատոնը, ի տարբերություն նախորդ տարիների, առանձնացավ նաեւ ամենաերկար տոլմայի պատրաստման մրցույթով: Նշենք, որ 2013-ի փառատոնին ավելացել է մասնակցող տաղավարների թիվը, որոնք նախորդ տարի 18-ն էին:

Փառատոնի 24 տաղավարներում ներկայացված էին գառան ծեծած մսով, պասուց, սնկով, բաստուրմայով եւ այլ՝ տոլմայի շուրջ 60 տեսակներ: Ավանդական տոլմաների կողքին փառատոնի տաղավարներում հնարավոր էր հանդիպել նաեւ խեցգետնով, հավով, ձկով տեսակների, անգամ՝ քաղցր տոլմաներ:

ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԸ ԿԱՐՈՂ ԵՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ «ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ» ՄՐՑՈՒՅԹԻՆ

ՀՀ կրթության եւ գիտության նախարարությունը հայտարարում է, որ ս.թ. օգոստոսի 9-15-ին Հայաստանում, 14-18 տարեկան դպրոցականների համար, կանցկացվի համահայկական ութօրյա 2 միջոցառում՝ Հայագիտական 6-րդ համահայկական օլիմպիադա եւ «Հայ Առաքելական եկեղեցու պատմություն» թեմայով մրցույթ: Վերջինս կազմակերպվում է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի հետ համատեղ, նրա աջակցությամբ եւ հովանավորությամբ:

Կեցության բոլոր ծախսերը Հայաստանում, ինչպես նաեւ բոլոր շրջայցերի եւ միջոցառումների կազմակերպումը հոգում է հայկական կողմը, մասնակիցները կամ նրանց ուղեկցող կազմակերպությունները հոգում են միայն ճանապարհածախսը:

Խնդրում ենք ներկայացվող տեղեկանքը տրամադրել համայնքային կազմակերպություններին, կրթօջախներին եւ շահագրգիռ անձանց:

Մասնակցության մասին հայտերը պետք է փոխանցել մինչեւ հուլիսի 15-ը: Մանրամասների համար զանգահարել Վրաստանում ՀՀ դեսպանատուն՝ 295-17-23 հեռախոսահամարով:

ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՐՆՈՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ - ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է

2013/2014 ուսումնական տարվա ընդունելություն հետեւյալ մասնագիտությունների եւ մասնագիտացումների գծով.

Մագիստրոսի որակավորմամբ՝

«Ֆինանսներ եւ վարկ»
«Հաշվառում եւ աուդիտ»
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

Ուսման տեւողությունը՝ 1 տարի - առկա կրթաձեւով:

Բակալավրի որակավորմամբ՝

«Ֆինանսներ եւ վարկ» ***(բանկային գործ)***
«Ֆինանսներ եւ վարկ» ***(մաքսային գործ)***
«Հաշվառում եւ աուդիտ» ***(տնտեսական գործունեության իրավական պաշտպանություն)***
«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր»

Ուսման տեւողությունը՝ 4 տարի - առկա եւ հեռակա կրթաձեւով:

Կրտսեր մասնագետ որակավորմամբ՝

«Հաշվապահական հաշվառում»

«Համակարգչային համակարգեր եւ ցանցեր» մասնագիտություններով, որտեղ ընդունվում են 9-րդ դասարանի ավարտական վկայականով:

Ուսման տեւողությունը, համապատասխանաբար՝ 2 տարի 10 ամիս եւ 3 տարի 10 ամիս - առկա կրթաձեւով:

Շրջանավարտները ուսումը կշարունակեն համալսարանի 2-րդ կուրսից, գերազանց առաջադիմություն ցուցաբերածները 3-րդ կուրսից՝ համապատասխան մասնագիտությամբ:

Մասնաճյուղի շրջանավարտներն ստանում են Ուկրաինայի Տերնոպոլի ազգային տնտեսագիտական համալսարանի պետական դիպլոմ, որը ճանաչվում է աշխարհի 82 երկրում:

Տեղեկությունների համար դիմել՝ ՀՀ, ք. Երեւան, Ավան, Աճառյան 31
հեռ. (+374 10) 61-22-02, 61-30-10, 62-29-69 (Երեւան),
5-74-21-31-81 (Թբիլիսի)
e-mail: erfiltanx@yahoo.com www.eftneu.am

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՀԻՄՆԱՐԿԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԱՄԶԱՐԱՅՈՒՄ

Հուլիսի 6-ին Հայ Առաքելական Ուղղափառ Սուրբ եկեղեցու Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանի հանդիսապետությամբ եւ Նինոծմինդայի հոգեւոր հովիվ Տեր Արմաշ քահանա Պողոսյանի, Ախալքալաքիի հոգեւոր հովիվ Տեր Տաթեւ քահանա Մարուքյանի եւ դպրաց դասի մասնակցությամբ կատարվեց Նինոծմինդայի շրջանի Մամզարա գյուղի «Սուրբ Մեսրոպ Մաշտոց» եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Եկեղեցու կառուցման բարերարությունն ստանձնել է նույն գյուղի բնակիչ, ռուսաստանաբնակ Հակոբ Խաչատրյանը:

Արարողությունն սկսվեց Տերունական աղոթքով. սաղմոսների եւ շարականների երգեցողության ներքո նախ ջրով եւ գինով մաքրագործվեցին 16 հիմնաքարերը, ապա դրանք օծվեցին առաջնորդի ձեռամբ: 16 հիմնաքարերը կառուցվող եկեղեցու հիմքում զետեղեցին՝ ինչպես համայնքի ղեկավարները, այնպես էլ մտավորականության եւ հասարակայնության ներկայացուցիչները:

Արարողությանը մասնակցում էին Նինոծմինդայի մունիցիպալիտետից Վրաստանի խորհրդարանի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը, մունիցիպալիտետի սակրեբուլոյի նախագահ Սմբատ Կյուրեղյանը, վարչության նախագահ Գագիկ Ղարսլյանը, Վիրահայոց թեմի Հոգաբարձուների խորհրդի անդամ, բարերար Արամ Սանոսյանը, Վրաստանի հայ գրողների «Վերնատուն» միության նախագահ Ժորա Սնխչյանը եւ ուրիշներ:

ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ ՍՊՈՐՏ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԽԱՂԵՐԸ ՎՐԱՅ ԵՎ ՀԱՅ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հուլիսի 6-ին Թաթարստանի մայրաքաղաք Կազանում բացվեց Ունիվերսիադա, որը կտեւի մինչեւ հուլիսի 17-ը ներառյալ:

Ունիվերսիադայում մասնակցելու համար Կազան են մեկնել Վրաստանի եւ Հայաստանի պատվիրակությունները: Վրաստանի պատվիրակությունը՝ կազմված 110 հոգուց: Պատվիրակության անդամներից 75-ը մարզիկներ են, որոնք կմասնակցեն 11 մարզաձեւերի մրցումներին՝ լող, ջրագնդակ, սուսերամարտ, ձյուդո, սամբո, բռնցքամարտ, շախմատ, տարբեր ձեւի ըմբշամարտեր, հրաձգություն, ռեգբի: Պատվիրակության կազմում կան մարզիչներ, բժիշկներ, մասնագետներ եւ մարզական գործիչներ:

Այսօրվա դրությամբ, Վրաստանի ակտիվում ոչ մի մեդալ չի գրանցվել, իսկ Հայաստանի հաշվին բռնցքամարտից եւ ազատ ոճի ըմբշամարտից՝ 2 արծաթե եւ 1 բրոնզե:

ԸՆԿԵՐԱԿԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ, ՈՐԸ ՀԱՆԳԵՑՐԵՑ ԿՐՔԵՐԻ ԲՈՐԲՈՔՄԱՆ

Թբիլիսիում անցկացվեց Վրաստանի եւ Ռուսաստանի մայրաքաղաքների «Դինամո» թիմերի ընկերական հանդիպումը: Մրցամարտը, որին ներկա էին Ռուսաստանի պետական Դումայի հինգ պատգամավորներ, համաշխարհային ֆուտբոլի աստղեր Քրիշտիանու Ռոնալդուն եւ Անդրեյ Շեւչենկոն, ավարտվեց ոչ-ոքի՝ 1:1:

Մինչեւ հանդիպումը եւ հանդիպումից հետո մի խումբ երիտասարդներ, ի նշան ռուս պատգամավորների այցի դեմ բողոքի, անցկացրին ակցիա, որը հետո վերաճեց ոստիկանության հետ ընդհարման: Արդյունքում, երեք երիտասարդներ ձերբակալվեցին եւ ենթարկվեցին վարչական պատասխանատվության:

Ընդ որում, հանդիպումից առաջ, համաշխարհային ֆուտբոլի աստղ Քրիշտիանու Ռոնալդուն Թբիլիսիում բացեց ֆուտբոլային ակադեմիա, որին շնորհվել է Վիտալի Դարասելիայի անունը:

ԽԱՉԲԱՌ



ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Ուկրաինական գարեջուր: 8.Օրվա վերջին մասը արեւամուտից մինչեւ կես գիշեր: 10.Դասական ոճի դրամատիկական ստեղծագործություն՝ ստեղծված սովորաբար թատրոնում բեմադրելու նպատակով: 11.Քաղաք Ադրբեջանում: 13.Մողեսի նման խոշոր երկկենցաղ կենդանի: 15.Բամբասանք: 17.Անջրաթափանց, սովորաբար բրեզենտե կամ թաղիքե ժամանակավոր կացարան: 18.Առասան, քուղ, հաղորդալար, սիմ: 19.Բարեկամ, մտերիմ, համախոհ: 21.Հացազգիների ընտանիքին պատկանող միամյա հացաբույս: 22.Ծեծ, ծաղկանք: 23.Շրթունք չունեցող, շրթնատ: 27.Անորոշ դերբայ: 29.Արտաշեսյան տոհմի վերջին գահակալ թագուհին: 32.Դեռ, առաջ: 33.Ձեռքի եւ ոտքի կարճ ու հաստ մատը, բթամատ: 35.Քարադրանմանների ընտանիքի թռչուն: 36.Հացահատիկային կուլտուրա: 37.Հունգարացի երգահան Ֆերենց ...: 39.Բարձր, վսեմ արժանիքներ ունեցող, հպարտ: 42.Հզորության չափման միավոր ՍԻ համակարգում: 44.Արաբ կնոջ անուն: 46.Բրնձի քաշովի, որիզապուր: 49.Սննդի այն հատկությունը, որ զգացվում է ճաշակելու ժամանակ: 50.Ազատ, զուրկ, հեռու մնալ: 53.Ադամի եւ Եվայի որդիներից: 54.Կենդանակերպի նշան: 55.Կարատեի աստիճան: 56.Անտեղի: 57.Վաղեմի, նախկին: 58.Ֆրանսիական ավտոմեքենա: 59.Անփորձ, անվարժ (բրբ.): 60.Գիրկ, գոգ, ծովի խորշ: 61.Մարդու ձեռքի եւ ոտքի թաթի հինգ վերջավորություններից յուրաքանչյուրը:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Նոտա: 2.Ռուս սցենարիստ Արկադի ...: 3.Հռոմեացի հայտնի քաղաքական գործիչ, զորավար եւ գրող Յուլիոս ...: 4.Դժոխք, տարտարոս, սանդարամետ: 5.Կակաոից եւ շաքարից պատրաստվող քաղցրավենիք: 7.Հովանավոր, պաշտպան, սատար: 9.Վրեժով լցված երդվյալ թշնամի: 12.XII դարի հայ գիտնական, բժիշկ ... Սեբաստացի: 14.Գլխի կմախք: 16.Չարք: 20.Ե'վ քիմիական տարր, ե'ւ կապարազգիների ընտանիքին պատկանող բույս: 24.Ցրտադիմացկուն խնձոր: 25.Նահանգ ԱՄՆ-ի հարավային մասում: 26.Անտառի ելակ: 28.Թափանցիկ անգույն հեղուկ, որ մաքուր վիճակում ներկայացնում է ջրածնի ու թթվածնի միացում: 30.Ժամի 60-րդ մասը: 31.Տանիքը ծածկելու նյութ, որ պատրաստվում է ստվարաթուղթը հատուկ բաղադրությամբ նյութով տոգորելու միջոցով: 33.Թափառական ցեղ, գնչու: 34.Փայտե մահճակալ: 38.Մեծ ընդարձակ սենյակ շինության մեջ, դահլիճ: 40.Բնության ահեղ երեւույթներից: 41.Ճապոնական ավանդական հագուստ: 42.Խաղողի տնկի: 43.Ալբանիայի մայրաքաղաքը: 45.Տխրություն, կսկիծ, տրտմություն: 47.Վայր, որտեղ նացիստական Գերմանիայի կողմից բանտարկվածները ենթարկվել են զանգվածային գնդակահարության՝ Դեմյանով ... (Ուկրաինա): 48.Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախկին նախարար ... Քոբալիա: 51.Երկնային արքայության այգի, դրախտ: 52.Կզակ, դունչ, չանա:

Կազմեց ԷԼԼԱ ԱԹԱԲԵԿՅԱՆԸ

ՆԱԽՈՐԴ ՀԱՄԱՐԻ ԽԱՉԲԱՌԻ ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐԸ

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ. 6.Բջջային: 9.Բազազ: 10.Կարեն: 11.Ինդիանա: 12.Տիտիզ: 14.Դուման: 16.Վերակառուցում: 18.Արտաշ: 20.Խիզախ: 21.Նամուս: 25.Շուտով: 26.Միջոցառում: 28.Վեներա: 29.Պատ: 30.Մակբայ: 31.Տուգանային: 33.Պաթոս: 34.Կոկիկ: 36.Չոբան: 40.Ցամաք: 41.Վնասազերծել: 43.Չուդրա: 44.Կեսար: 45.Անպակաս: 46.Մասիս: 47.Դոլար: 48.Փառամոլ:

ՈՒՂՂԱՀԱՅԱՑ. 1.Էջանշան: 2.Սահիվալ: 3.Նիոնիում: 4.Կապիտան: 5.Պատիվ: 7.Պատում: 8.Հեծանիվ: 13.Ձեղում: 14.Դուրում: 15.Պրոռեկտոր: 17.Կասկածյալ: 19.Շատրվան: 20.Խոսակից: 22.Սինուս: 23.Կոպալ: 24.Կատար: 25.Շուշիկ: 27.Ցան: 31.Տոննա: 32.Նորեկ: 33.Պատուհան: 35.Կառապան: 37.Ոսպնյակ: 38.Ազգական: 39.Որսագող: 41.Վրձին: 42.Լեւոն:

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աթոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge skype: VRASTAN-1920
E-mail: vrastan@caucasus.net

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445